Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ:

ԳԵՏԱՅԻՆ ՊԱՆԴՈԿ

«Պրագայում» փայլփլում էին ջահերը, ճաշի աղմուկի և խոսակցությունների մեջ նվագում էր պորտուգալական լարային նվագախումբը, ոչ մի ազատ սեղան չկար: Կանգնեցի նայելով շուրջս, և արդեն ուզում էի դուրս գալ, երբ տեսա

ծանոթ զինվորական բժշկին, որն անմիջապես հրավիրեց ինձ իր սեղանին, պատուհանի մոտ՝ բաց այդ գարնանային տաք գիշերվա մեջ, դեպի տրամվայներով դղրդացող Արբատ: Ճաշեցինք միասին, բավական խմելով օղի և կախեթական գինի, խոսում էինք վերջերս հրավիրված պետական դումայի մասին, սուրճ պատվիրեցինք: Բժիշկը հանեց իր հին արծաթյա ծխախոտատուփը, առաջարկեց ինձ իր «կրակիչը» և ծխելով ասաց.

— Այո, շարունակ Դումա հա Դումա… Կոնյակ չխմե՞նք: Տխուր եմ մի տեսակ:

Ես դա ընդունեցի որպես կատակ, նա հանդարտ ու չոր բնավորության տեր մարդ էր (շիկահեր, քունքերին արդեն արծաթ գցած, ամուր և ուժեղ կազմվածքով, որին շատ էր սազում զինվորական համազգեստը), բայց նա լրջորեն ավելացրեց.

— Գարունն է, հավանաբար, այս տխրությունը բերում: Ծերանալով, այն էլ ամուրի, երազող, գնալով դառնում ես ավելի զգայուն, քան ջահել ժամանակ: Զգո՞ւմ եք, ինչպես է բուրում բարդին, ինչպես հնչեղ են դղրդում տրամվայները: Ի դեպ, եկեք փակենք պատուհանը, հաճելի չէ,— ասաց նա վեր կենալով:— Իվան Ստեպանիչ, շուստովյան…

Մինչ ծեր սպասավոր Իվան Ստեպանիչը գնաց շուստովյան բերելու, նա լռում էր ցրված տեսքով: Երբ մատուցեցին ու մի-մի ըմպանակ լցրին, շիշը պահեց սեղանին և շարունակեց, կում-կում անելով կոնյակն ու սուրճը տաք գավաթից:

— Նշանակություն ունի նաև ահա թե ինչը՝ որոշ հիշողություններ: Ձեզնից առաջ այստեղ եկավ բանաստեղծ Բրյուսովը մի նիհարիկ, փոքրիկ աղջկա հետ, նման աղքատ ուսանողուհու, և ինչ-որ բան էր խիստ, հատու և զայրացած գոռգոռում մատուցողին իր ղատասաց, քթի մեջ հաչող ձայնով, որը մոտ վազեց նրան, ըստ երևույթին, ներողություն խնդրելու ազատ տեղեր չլինելու համար,— տեղ, հավանաբար, պատվիրված էր հեռախոսով, սակայն չէր պահված,— հետո գոռոզ տեսքով հեռացավ: Դուք նրան լավ գիտեք, իսկ ես մի քիչ եմ ծանոթ, հանդիպում եմ ռուսական հին սրբապատկերներով հետաքրքրվող խմբակներում, ես էլ եմ այդ սրբապատկերներով հետաքրքրվում, և շատ վաղուցվանից, մերձվոլգյան քաղաքներից սկսած, ուր մի ժամանակ ծառայել եմ մի քանի տարի: Բացի այդ, նրա մասին շատ եմ լսել, նաև նրա սիրային պատմությունների, այնպես որ մի քիչ խղճացի այդ, անկասկած, նրա հերթական երկրպագուին և զոհին: Սարսափելի սրտաշարժ պատկեր էր ներկայացնում այդ աղջիկը, շփոթված ու հիացմունքով նայում էր մեկ այս, երևում էր իր համար բոլորովին անսովոր, ռեստորանային շքեղությանը, մեկ նրան, մինչ սա վանկ-վանկ դուրս էր մղում իր հաչոցը, դիվային խաղացնելով սև աչքերն ու թերթերունքները: Հենց այդ ամենն էլ մեջս հիշողություններ արթնացրին: Կպատմեմ ձեզ մի հիշողություն, որ հենց նա մեջս արթնացրեց, մանավանդ որ նվագախումբն էլ գնում է ու կարելի է հանգիստ նստել…

Նա արդեն կարմրել էր օղուց, կախեթական գինուց, կոնյակից, ինչպես միշտ կարմրում են շիկակարմիրները գինուց, բայց դեռ շարունակում էր ըմպանակ ըմպանակի ետևից կոնծել:

— Հիշեցի,— սկսեց նա,— ինչպես մի քսան տարի առաջ մի անգամ անցնում էր մերձվոլգյան քաղաքներից մեկի փողոցով ոմն բավական ջահել զինվորական բժիշկ, այսինքն՝ պարզ ասած՝ ես ինքս. Քայլում էր հենց այնպես, որ ինչ-որ նամակ գցի փոստարկղը, այն անհոգ երջանկության զգացումով, որպիսին մարդ առանց մի պատճառի ունենում է լավ եղանակին: Իսկ այդ ժամանակ հենց հիանալի եղանակ էր, մեղմ, չոր, արևոտ, սեպտեմբերի սկզբի երեկո, երբ մայթերին այնքան հաճելի խշխշում են ոտքիդ տակ թափված տերևները: Եվ ահա, ինքս իմ մտքերի հետ,

պատահմամբ բարձրացնում եմ հայացքս ու տեսնում. առջևից արագ քայլերով գնում է մի շատ բարեկազմ, նրբիրան աղջիկ մոխրագույն կոստյումով, մոխրագույն՝ գեղեցիկ թեքված գլխարկով, ձիթագույն լայքայե ձեռնոցով ձեռքին մոխրագույն հովանոց: Տեսնում եմ ու զգում, որ նրա մեջ ինչ-որ բան ինձ դուր է գալիս սարսափելի, ու հետն էլ մի քիչ տարօրինակ է թվում. ինչո՞ւ և ո՞ւր է այդպես շտապում: Կարծես զարմանալի ոչինչ չկար, մարդիկ ինչքան ասես շտապ գործեր են ունենում: Եվ սակայն դա չգիտես ինչու հետաքրքրում էր ինձ: Բնազդաբար արագացնում եմ քայլերս ու գրեթե հասնում նրան, և, պարզվում է, ոչ զուր: Առջևում, անկյունում հին, ցածրիկ եկեղեցի է, և նա գնում է ուղիղ այնտեղ, թեև օրը լի օր է ու ժամն էլ այնպիսին, երբ եկեղեցիներում ոչ մի արարողություն դեռ չի լինում: Այնտեղ նա վազ է տալիս գավիթ, դժվարությամբ բացում է ծանր դուռը, իսկ ես շարունակում եմ գնալ նրա ետևից, ու ներս մտնելով կանգ եմ առնում շեմքին: Եկեղեցում ոչ ոք չկար, և նա, ինձ չտեսնելով, արագ և թեթև քայլերով գնում է դեպի բեմ, խաչակնքում ու ճկուն ծնկի գալիս, գլուխը ետ գցած, ձեռքերը սեղմած կրծքին, հովանոցը գցելով հատակին, ու նայում է զոհասեղանին այն, երևում է, համառ աղերսող հայացքով, ինչպես մարդիկ աստծու օգնությունն են աղերսում մեծ վշտի կամ որևէ շատ ուժեղ ցանկության դեպքում: Ինձնից ձախ նեղլիկ վանդակապատ պատուհանից լուսավորում է իրիկնային դեղնավուն լույսը, խաղաղ ու ասես նույնպես հին, մտահոգ, իսկ առջևում, եկեղեցու կամարաձև ցածրիկ խորքում արդեն մութ է, փայլփլում են միայն սրբապատկերների հնադարյան սքանչելի կոպտությամբ ձուլած ոսկե մակադրվագները բեմի պատին, և նա, ծնկի եկած, աչքը չի կտրում այդ սրբապատկերներից: Բարակ մեջք, քնարաձև հետույք, թեթև, գեղեցիկ կոշիկի կրունկները... Հետո մի քանի անգամ թաշկինակը սեղմում է աչքերին, արագ վերցնում հատակից հովանոցը և, ասես մի բան վճռելով, նորից ճկուն բարձրանում է տեղից, վազում դեպի ելքը, հանկարծ տեսնում է իմ դեմքը, ինձ ուղղակի ցնցում է իր գեղեցկությամբ այն սարսափելի վախը, որ մի պահ երևում է նրա արցունքներից փայլող աչքերում...

Կողքի սրահում ջահը հանգավ,— ռեստորանը արդեն դատարկվել էր,— և բժիշկը նայեց ժամացույցին:

— Ոչ, դեռ ուշ չէ,— ասաց նա:— Ընդամենը ժամը տասն է: Դուք ոչ մի տեղ չե՞ք շտապում: Ուրեմն, մի քիչ էլ նստենք, ուզում եմ պատմել վերջացնել այդ բավական տարօրինակ պատմությունը: Դրա մեջ տարօրինակը նախ այն էր, որ նույն երեկոյան, ավելի ճիշտ, ուշ երեկոյան, նորից տեսա նրան: Հանկարծ խելքիս փչեց գնալ Վոլգայի վրայի ամառային պանդոկ, որտեղ ընդամենը երկու-երեք անգամ էի եղել ամբողջ ամռան ընթացքում, ու այն էլ միայն նրա համար,

որ քաղաքի շոգ օրից հետո մի քիչ նստեմ գետի օդում: Թե ինչու գնացի հենց այդ արդեն զով երեկո, աստված գիտի, ասես ինչ-որ բան մղում էր ինձ: Կարելի է ասել, իհարկե, սովորական պատահականություն էր. մարդը պարապությունից գնացել է և ոչ մի զարմանալի բան չկա նոր պատահական հանդիպման մեջ: Իհարկե, դա միանգամայն արդարացի է: Բայց ինչո՞ւ եղավ և մյուսը, այսինքն այն, որ ես նրան հանդիպեցի սատանան գիտե որտեղ ու որ հանկարծ արդարացան իմ ինչ-որ աղոտ կասկածներն ու նախազգացումները, երբ առաջին անգամ տեսա նրան, և այն լարվածությունը, ինչ-որ տագնապալի նպատակը, որով նա գնում էր եկեղեցի և այնտեղ այնպես լարված ու լուռ, այսինքն ամբողջ էությամբ, ամենակարևորով, ամենահիսկականով, որ կա մեր մեջ, ինչ-որ բան էր աղերսում աստծուց: Գալով պանդոկ ու բոլորովին մոռանալով նրա մասին, երկար ու ձանձրույթով նստել էի գետային պանդոկում, շատ թանկ, ի դեպ ասած, հայտնի՝ վաճառականների իր գիշերային քեֆերով, հաճախ հազարների արժողությամբ, և առանց մի հաճույք ստանալու ժամանակ առ ժամանակ կուլ էի տալիս գարեջուրը, հիշելով Հռենոսն ու շվեցարական լճերը, ուր անց էի կացրել անցյալ տարի ամառը, մտածելով այն մասին, թե որքան գռեհիկ են բոլոր ռուսական գավառական քաղաքից դուրս գտնվող զվարճավայրերը, հատկապես մերձվոլգյանը: Դուք եղե՞լ եք մերձվոլգյան քաղաքներում և ջրի վրա, գերանակապ կամուրջներին սարքված այդպիսի պանդոկներում:

Պատասխանեցի, որ Վոլգան լավ չգիտեմ, այնտեղ չեմ նավարկել, բայց հեշտությամբ պատկերացնում եմ:

— Դեհ, իհարկե,— ասաց նա:— Ռուսական գավառն ամենուրեք բավական միանման է: Մի բան միայն այնտեղ ոչնչի նման չէ՝ Վոլգան: Վաղ գարնանից և մինչև ձմեռ այն միշտ և ամեն տեղ անկրկնելի է, ամեն եղանակի, և՛ ցերեկ, և՛ գիշեր: Գիշերը նստում ես, օրինակ, այդպիսի պանդոկում, նայում պատուհաններից դուրս, որ կազմում են նրա երեք պատերը, իսկ երբ ամռան գիշերով բոլոր այդ պատուհանները բաց են օդի մեջ, նայում ես ուղիղ մթության մեջ, գիշերվա սևի

մեջ ու մի առանձնահատուկ ուժով ես զգում պատուհաններից դուրս այդ ջրային տարածությունների ողջ վայրի վեհությունը. տեսնում ես հազարավոր ցրիվ գույնզգույն լույսեր, լսում կողքիցդ շարժվող նավակների ճղփոցը, այդ նավակների, բեռնանավերի, լաստանավերի վրա իրար կանչող ռամկական ձայները, միմյանց զգուշացնող բղավոցները, տարբերաձայն երաժշտությունը շոգենավերի շչակների՝ մեկ հնչեղ, մեկ ցածր, և դրանց միախառնվող տերցիաները զանազան արագ սլացող գետային շոգեքարշիկների, հիշում ես բոլոր այդ ավազակային ու թաթարական բառերը՝ Բալախնա, Վասիլ-Սուրսկ, Չեբոկսարի, Ժիգուլի, Բատրակի, Խվալինսկ, և բեռնորդների զարհուրելի հորդաները դրանց նավահանգիստներում, հետո անզուգական գեղեցկությունը մերձվոլգյան հին եկեղեցիների, ու միայն գլուխդ ես տարուբերում. իսկապես ի՜նչ անսման է մեր այս Ռուսիան: Իսկ նայում ես շուրջդ. ախր ինչ մի առանձին բան է այս պանդոկը: Ցցագերաններից մի շինություն, գերանակապ մառան կոպիտ շրջանակված պատուհաններով, սպիտակ, բայց ոչ մաքուր սփռոցներով ծածկված սեղաններ, ծանր, էժանագին սպասք, որտեղ աղամանի մեջ աղը խառնված է պղպեղին և անձեռոցիկներից գորշ օճառի հոտ է փչում, տախտակներից շինած բարձրություն, այսինքն բալագանի բեմահարթակ՝ բալալայկա, հարմոն և տավիղ նվագողների համար, որ ետևի պատից լուսավորված էր թիթեղյա ուժեղ անդրադարձիչներով նավթավառ լամպերով, շիկամազ սպասավորներ, տերը՝ գյուղացի՝ հաստամազ, արջային պստիկ աչքերով և ինչպես այդ ամենը համատեղես այն բանի հետ, որ այստեղ շարունակաբար մի գիշերվա մեջ խմվում է մի հազար ռուբլու մումմ ու ռեդերեր: Եվ այս ամենը, գիտեք, նույնպես Ռուսիա է... Սակայն ձեզ չձանձրացրի՞:

— Ոչ, ոչ,— ասացի:

— Դեհ, թույլ տվեք, ուրեմն, վերջացնեմ: Այս բոլորը նրա համար եմ ասում, որ պատկերացնենք, թե ինչ անպարկեշտ տեղում եմ հանկարծ նրան տեսել իր մաքուր, ազնվատես գեղեցկությամբ, և ինչ ուղեկցի հետ: Կեսգիշերվա մոտ պանդոկն սկսեց աշխուժանալ և լցվել... Վառեցին առաստաղից կախված ահռելի և շատ շոգ լամպը, պատերի վրայի լամպերը, տախտակներից բեմահարթակի ետևի պատի

լամպերը, սպասավորների մի ամբողջ գունդ գործի անցավ, լցվեցին հյուրերը, իհարկե, վաճառականների որդիներ, աստիճանավորներ, կապալառուներ, շոգենավերի կապիտաններ, քաղաքում հյուրախաղերի եկած դերասանների խումբը. սպասավորները անպատկառ ծռմռվելով սկսեցին վազ տալ մատուցարանները ձեռներին, սեղանների շուրջ նստած խմբերում սկսվեց գոռգոռոց, հռհռոց, քուլա-քուլա տվեց ծխախոտի ծուխը, բեմահարթակ դուրս եկան և երկու կողմերում շարքով նստեցին բալալայկա նվագողները օպերային-կրեմագույն բլուզներով, մաքուր ոտնափաթաթաններով և նոր տրեխներով, նրանց ետևից դուրս եկավ և առջևում շարվեց կարմիր սպիտակ շպարված պոռնիկների երգչախումբը, բոլորը միանման ձեռքերը մեջքին ծալած և ականջ ծակող ձայնով, ոչինչ չարտահայտող դեմքերով սկսեցին բալալայկայի հնչյունների հետ ծոր տալ մի խղճալի, երկարաձիգ երգ ինչ-որ դժբախտ «զինվորի» մասին, որ իբր վերադարձել էր թուրքական երկարատև գերությունից. «նը-րան հարա-զատը չճանաչեց ու հար-ցըրին ով ես դ-դու...»: Հետո մի հսկայական հարմոն առած դուրս եկավ ինչ-որ «նշանավոր Իվան Գրաչև»: Նստեց բեմահարթակի ամենածայրի աթոռին ու թափահարեց խիտ, գռեհկաբար ուղիղ սանրած ճեփ-ճերմակ մազերը. հատակ սրբողի մռութ, դեղին շեղօձիք բլուզ՝ բարձր օձիքն ու փեշը կարմիր մետաքսով ասեղնագործած, բարակ կարմիր գոտի՝ երկար կախ ընկած ծոպերով, նոր կոշիկներ լաքե երկար ճիտքերով... Մազերը թափահարեց, բարձրացրած ծնկին դրեց եռաշար հարմոնը՝ սև-ոսկեգույն պարկերով, անագե աչքերը հառեց վերև, չգիտես ուր, լոթիավարի մի հատ անցավ ստեղներով ու մռնչաց, սկսեց երգել այդ ստեղներով, հաստ օձանման պարկիկները ծռմռելով ու ձգելով, ստեղների վրա զարմանալի հնարքներ բանեցնելով, շարունակ ավելի ու ավելի բարձր, ավելի բազմազան, հետո մռութը վեր տնկեց, աչքերը փակեց ու կլկլացրեց կանացի ձայնով. «Я вечер в лужках гуляла, грусть хотела разогнать...»: Ահա հենց այդ պահին տեսա նրան, և, իհարկե, ոչ մենակ. արդեն տեղիցս վեր էի կացել և ուզում էի սպասավորին կանչել ու վճարել գարեջրի համար, բայց կանգնածս տեղում մնացի զարմացած, բացվում է բեմահարթակի ետևի դուռը և հայտնվում է նա խակի գույնի ինչ-որ փոքրիկ հասարակ գլխարկ գլխին, հագին նույն գույնի անջրանցիկ վերարկու գոտիով,— հիրավի, նա զարմանալի գեղեցիկ էր այդ հագուստով, նման բարձրահասակ տղեկի,— իսկ ետևից, նրա արմունկը բռնած գալիս էր կարճահասակ մեկը անթև բաճկոնով, ազնվականական հովարով գլխարկը գլխին, թխադեմ, արդեն կնճռոտ, սև խլվլան աչքերով: Եվ, հասկանում եք, ոնց որ ասում են, աչքերիս առաջ մթնեց: Ճանաչեցի այդ մարդուն՝ սնանկացած կալվածատեր, հարբեցող, այլասերված, գնդից վտարված նախկին

հուսարական պորուչիկ, և ինձ կորցրած, ոչինչ չհասկանալով և չմտածելով, սեղանների միջով նետվեցի առաջ այնքան արագ, որ նրանց հասա գրեթե ներս մտնելու պահին. Իվան Գրաչևը դեռ բղավում էր. «я цветок там искала, чтобы милому послать...»: Երբ մոտ վազեցի նրանց, տղամարդը ինձ տեսնելով հասցրեց ուրախ ձայն տալ. «Օ՛, բժիշկ, ողջույն», մինչդեռ կինը սարսափելի գունատվեց, բայց ես այդ մարդուն մի կողմ հրեցի և կատաղի շշնջացի կնոջ ականջին. «Դուք, այս պանդոկո՛ւմ: Կեսգիշերին, փչացած հարբեցողի, ամբողջ քաղաքում ու նահանգում հայտնի խարդախ խաղամոլի հե՛տ»: Բռնեցի նրա թևից, սպառնալով, որ կջարդեմ այդ մարդուն, եթե նա հենց այս րոպեիս ինձ հետ դուրս չգա այդտեղից: Տղամարդը քարացել-մնացել էր. զարմանալի չէր, նա գիտեր, որ ես կարող էի այս ձեռքերովս պայտ ջարդել: Կինը շրջվեց և գլուխը կախ քայլեց դեպի դուռը: Հասա նրա ետևից գետաքարե սալարկով առափնյակի հենց առաջին լապտերի մոտ, թևը բռնեցի. նա գլուխը չբարձրացրեց, թևը չքաշեց: Երկրորդ լապտերի մոտ նստարանի կողքին, նա կանգ առավ և գլուխը կրծքիս սեղմած ցնցվեց լացից: Նստեցրի նրան նստարանին, մի ձեռքով բռնած նրա արցունքներից թաց գեղեցիկ, աղջկական ձեռքը, մյուսով ուսը գրկած: Նա անկապ-անկապ ասում էր. «Ոչ, ճիշտ չէ, ճիշտ չէ, նա լավն է... նա դժբախտ է, բայց նա բարի է, մեծահոգի, անհոգ...»: Լռում էի, առարկելն անօգուտ էր: Հետո ձայն տվեցի կողքներիցս անցնող կառքին: Նա խաղաղվեց, և մենք լուռ բարձրացանք քաղաք: Հրապարակում նա կամացուկ ասաց.

«Հիմա ինձ բաց թողեք, ոտքով կհասնեմ, չեմ ուզում, որ դուք իմանաք որտեղ եմ ապրում»,— և հանկարծ ձեռքս համբուրելով ցած թռավ ու առանց ետ նայելու, անհաստատ քայլերով շեղակի անցավ հրապարակով... Այլևս երբեք չտեսա նրան և մինչև օրս այդպես էլ չգիտեմ, թե ով էր նա, ինչ էր...

Երբ վճարեցինք, հագնվեցինք ներքևում ու դուրս եկանք, բժիշկն ինձ հետ հասավ մինչև Արբատի անկյուն, և կանգ առանք, որ հրաժեշտ տանք միմյանց: Փողոցն ամայի էր և լուռ, մինչ նոր աշխուժացումը կեսգիշերին, թատրոններից ու ռեստորաններում ընթրիքներից հետո մարդկանց դուրս գալն ու մեկնելը: Երկինքը սև էր, մաքուր փայլում էին լապտերները Պրեչիստենսկի բուլվարի մատղաշ, փարթամ կանաչի տակ, զգացվում էր մեղմ բուրմունքը գարնանային անձրևի, որ թրջել էր փողոցները, մինչ մենք նստած էինք «Պրագայում»:

— Բայց գիտեք,— ասաց բժիշկը, շուրջը նայելով,— ես հետո զղջում էի, որ նրան, այսպես ասած՝ փրկեցի: Իմ կյանքում այդ կարգի ուրիշ դեպքեր էլ են եղել... Իսկ ինչո՞ւ էի ես, թույլ տվեք հարցնել, խառնվում: Միևնույն չէ՞, թե ինչպես և երբ է մարդը երջանիկ: Հետևանքնե՞րը: Բայց դրանք ամեն դեպքում միշտ լինում են. չէ՞ որ ամեն ինչ մարդու հոգում թողնում է դաժան հետքեր, այսինքն հիշողություններ, որ առանձնապես դաժան են, տառապալից, եթե որևէ երջանիկ բան ես հիշում... Էհ, ցտեսություն, շատ ուրախ եմ ձեզ հանդիպելուս համար...

27 հոկտեմբերի 1943